

**INTERNATIONAL ORGANIZING COMMITTEE
FOR THE PREPARATION OF THE CONGRESS OF WESTERN ARMENIANS**

Միրելի Արմենակ,

Ինչպես պայմանավորվել էիք Կազմակերպչական Կոմիտեի անդամ Վահան Մելիքյանի հետ Երեւանում կայացած բանակցության ժամանակ՝ դիմում ենք Ձեզ հետեւյալ առաջարկով:

Արեւմտահայերի (Օսմանյան կայսրության նախկին հայ հայքաղաքացիների ժառանգների) Լիագոր Ներկայացուցչական Մարմինների հիմնադրման աշխատանքները (ընդհատված 1917-1920 թթ հետո) սկսվել են 2000 թվին, երբ այդ տարվա նոյեմբերի 21-ին Մոսկվայի «Նեզավիսիմայա զագետա» օրաթերթում հրապարակվեց Արեւմտահայերին ուղղված Դիմումը՝ տարագրության մեջ իրենց Ներկայացուցչությունը հիմնելու համար: 2006 թ հոկտեմբերի 25-ին Երեւանի «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակվեց Նախաձեռնող Խմբի Ուղերձը՝ Կազմակերպչական Կոմիտե ստեղծելու՝ Արեւմտահայերի Համագումար նախապատրաստելու եւ անցկացնելու համար:

Ֆրանսիայի 1901թ հուլիսի 1-ի Օրենքի հիման վրա Փարիզում գրանցված է Միջազգային Կազմակերպչական Կոմիտե Արեւմտահայերի համագումար նախապատրաստելու եւ անցկացնելու համար: Կազմակերպչական Կոմիտեն, բաղկացած էռեսուն անդամներից աշխարհի տարբեր հայ համայնքներից, մինչեւ օրս կայացրել է տասներկու նիստ, վերջինը 2010 թ սեպտեմբերի 25-26-ին Փարիզում (Մեր):

Կազմակերպչական Կոմիտեի կենտրոնը գտնվում է Ժընևում, Շվեյցարիա, մասնաճյուղերը հայաշատ կենտրոններում:

Արեւմտահայերի Համագումար նախապատրաստելը, անցկացնելը եւ այնտեղ Արեւմտահայերի Լիագոր Ներկայացուցչական Մարմիններ հիմնելը շատ բարդ եւ չափազանց պատասխանատու գործ է, որ պահանջում է լուրջ աշխատանք հայացեկարգային, կազմակերպչական եւ ֆինանսական ասպարեզներում՝ ամենամոտ ապագայում Փարիզում Համագումարը անցկացնելու համար:

Առաջարկում ենք Ձեզ եւ Ձեր հարգելի ընկերներին միասնականորեն մասնակցել Միջազգային Կազմակերպչական Կոմիտեի աշխատանքներին, խուսափելու համար հանրության մեջ շփոթություն առաջացնելուց եւ զուգահեռ եւ ջլատող աշխատանքներից:

Սպասում ենք ձեր առաջարկներին,

Հարգանքներով՝

Կարեն Միքայելյան

Գործադիր տնօրեն

Address: Comité international pour la préparation du congrès des Arméniens occidentaux 1200 Genève, Suisse